# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 262
*30 նոյեմբեր 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N32-Ա, N33-Ա, N34-Ա, N35-Ա, N36-Ա, որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ա

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 19 հոդվածով, 13-րդ հոդվածի 3-րդ կետով, , հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.09.2006թ.-ի <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին>> N15-Ն հրամանի, 12-րդ կետի.

Որոշում եմ`

Հաստատել հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա Լոռու Մարզի Լեռնապատ համայնքի համայնքապետարանի համայնքային ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնող աշխատակազմի համայնքային ծառայողների ցուցակը:

1.Հասմիկ Բաբկենի Վարդանյան աշխատակազմի քարտուղար /1.2-1/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 18
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2018 թվականի թիվ 33-Ա

## ԱՐՇԱԿ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշակ, Արմինե, Արևիկ, Ցոլակ Հակոբջանյանների և Էմմա Դալլաքյանի հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, թիվ 569828, 569829 վկայականները, կադաստրի տրվյալների բազան՝ պարզվում է, որ թիվ 569828 վկայականում սխալմամբ հողամասի ծածկագիրը գրվել է 06-041-245-32, սակայն պետք է գրվեր 06-041-0245-0027, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, 77 հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 101 հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4 կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուղղել թիվ 569828 վկայականում տեղի ունեցած սխալը 06-041-245-32-ի փոխարեն գրել 06-041-0245-0027:
2. Քաղաքացիներ Արշակ, Արմինե, Արևիկ, Ցոլակ Հակոբջանյանների և Էմմա Դալլաքյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ հողամասերի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լեռնապատ համայնքի սեփականության իրավունքը.
   - 06-041-0245-0027 ծածկագրով, 0,4263 հա խոտհարքը(վկայական՝ 569828)
   - 06-041-0256-0033 ծածկագրով, 0,0666 հա վարելահողը (վկայական՝ 569829)
3. Լեռնապատ համանքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. նոյեմբերի 23
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2018 թվականի թիվ 34-Ա

## ՌՈՒԲԻԿ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուբիկ, Համեստուհի, Անի, Դավիթ Քամալյանների հողամասից հրաժարվելու մասին դիմումը, թիվ 569626 վկայականը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, 77 հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 101 հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Քաղաքացիներ Ռուբիկ, Համեստուհի, Անի, Դավիթ Քամալյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, 06-041-0214-0162 ծածկագրով 0,0666 հա հողամասի(վկայական` 569626) նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լեռնապատ համայնքի սեփականության իրավունքը:
2. Լեռնապատ համանքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 23
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

24 հոկտեմբերի 2018 թվականի թիվ 35- Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ Ե. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի Ե. Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոցին (հողամասի ծածկագիր՝ 06-041-0027-0002), տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 38 փողոց 4/1:
2. Սույն հասցեավորումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 24
գ. Լեռնապատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 36-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37 հոդվածով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ավագանու 2018թ.-ի հոկտեմների 26-ի թիվ 35-Ն <<Լեռնապատ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2018թ.-ի փոփոխված բյուջեի՝ եռամսյակային համամասնությունները համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 2018թ.-ի օգոստոսի 30-ի <<Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեի եռամսյակային բախշումը հաստատելու մասին >> N29-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 26
գ.Լեռնապատ